

087.1

Q-40

440

ՉԱՐԻՆԻ

ԻՆՉՊԵՍ ԶՆՐԴԵՐԵԼ

ՏՕՆԵԾԵՈՒՐ



ՍԵՐՍԻԿ ՄԱՆԿԱԿՆՈՒՄ

(Կն. Կարսեցիի և Կարսեցիների)

087.1
2-40

16201 16201

ԶԱՐՈՒՀԻ

ԻՆՉՊԵՍ ԶԱՐԳԱՐԵԼ
ՏՕՆԱԾԵՌԸ



6693

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «Կուլտուրա» ԸՆԿ. Վեյկամինովիկ. 18.

1910





† Մարգարիտ Մարտիրոսեանց

բարեկամ որք ու անապատտան մ'անուկների



Bullfinch

Ինչպես զարդարել տօնածառը

(Ս. Երասման մանկանոցում)



Իկին Հայկանուշը անցեալ տարի այս ժամանակ որբանոցում մի քանի երեխայ շուրջը ժողոված, պսպղուն, գոյնզգոյն թղթեր, կարտոններ սեղանին թափթըփած, մկրատը, գրչահատը, մատիտն ու ներկերը միև՛ փոքրիկ սեղանի վրայ դարսած, մի ուրիշ հասարակ սեղանի վրայ էլ սոսինձը, վրձինները և ներկերը դրած, թէ աշխատում էր, թէ պատմում և հեռն էլ երեխաներին սովորեցնում:

Վարդուհին, որ որբանոցում եղած երեխաներից ամենափոքրիկն ու կայտառն էր, չէր թողնում, որ աիկին Հայկանուշը երեխաներին պատմէ, թէ ինչու անպատճառ ձմեռն են սարքում տօնածառ և այն էլ այսպէս փոշփոշոտ ծառից:

—Սյգքանն էլ չըգիտե՞ս, Վարդիկ,—կտարած գգալի նրման մէջ ընկաւ Զարմայրը.—որովհետև ձմեռը ուրիշ կանաչ ծառ չի լինում, բացի եղևնուց:

—Այն ժամանակ թող Զատիին մեր սալորենու, նշենու վրայ սարքեն տօնածառ,—Զարմայրի խօսքը կարեց Վարդուհին:

—Սա էլ խօսք ասեց,—վրայ բերաւ Անուշաւանը:—Ո՞վ

է լսել Չատկին տօնածառ: Իսկ կարմիր ձուն էլ քո մեծ խելքով նոր տարուն ներկեն էլի...

—Տիկին Հայկանուշ, խնդրում ենք շարունակէք պատմել,—առաջին դասարանի աշակերտուհի Սաթենիկը վերջապէս խօսեց:

—Հա, այն էի ասում, որ տօնածառը հայկական հին սովորութիւնների մէջ չէ եղել և ներմուծւած է Եւրոպայից:

Իսկն ասած, հայի նոր տարին էլ յունւարին չէ, այլ մի փոքր առաջ, ձմեռնամուտին, Նաւասարդին:

Նոր տարին մեր հայրնաճանիքները մինչև օրս էլ համարեա թէ չեն տօնում, այլ ընդհակառակ աւելի են աշխատում, որպէսզի ամբողջ տարին պարպ-սարպայ չըման:

Հայերն աւելի մեծ շուքով տօնում են սուրբ Յարութիւնը, Չատիկը, որովհետև իսկական տօնն էլ Յիսուս-Քրիստոսի, նրա սուրբ գաղափարների յազմանակը՝ անմահութիւնը գատիկով պսակւեց:




Թիֆլիսի VII-րդ դասարանի աշակերտուհի Մ Ա Ր Գ Ա Ր Ի Տ
† 24 հոկտ. 1909, Թիֆլիս:

Աստուծով երբ կրմեծանաք, այն ժամանակ աւելի լաւ կը հասկանաք, որ երեխան որքան էլ հանճարեղ, իմաստուն լինի, այնուամենայնիւ նա դեռ երեխայ է: Միևնոյն է թագաւորի տղայ, թէ մի հասարակ գեղջուկի, բոլոր երեխաներն էլ Յիսուս-Քրիստոսի նման երեխաներ

են: Բայց բանը նրանումն է, որ երեխան այնպէս մեծանայ, այնպիսի գաղափարներ ունենայ, ինչպէս Յիսուս-Քրիստոսը:

—Մայրիկ, ես Յիսուսի նման եմ ուզում մեծանալ, որ անպատճառ համբարձւեմ երկինք և Յիսուս-Քրիստոսի հետ միասին երկնքում խեղճ ու անապաստան որբ երեխաների համար տօնածառ սարքեմ,—ամենայն լրջութեամբ մօր զրոյցն ընդհատեց զիմնագլխայի եօթերորդ դաստան աշակերտուհի հեղահամբոյր օրիորդ Մարգարիտը, որ մօր հետ եկել էր որբանոց երեխաներին զբաղեցնելու:



Նկար 1.

—Այդ ինչեր ես ասում, Մարգո, մեղք չէ,—Մարգարիտի խօսքը կտրեց Սաթենիկը:

—Ինչո՞ւ է մեղք, Սաթօ: Մայրիկ, միթէ ամենքս էլ չըպիտի աշխատենք Յիսուսի նման գոնւելու գաղափարի, ընկերի համար: Չէ, չէ, ես պէտք է երկինք համբարձւեմ և Յիսուս-Քրիստոսին մանրամասն տեղեկութիւններ տանեմ մեր այս անբաղդ աշխարհից:



Նկ. 2.

—Չաւակս, Յիսուս-Քրիստոսը երկնքից տեսնում է աշխարհիս դժբաղդութիւնը և հէնց այս տօնածառն էլ, որ կամենում ենք սարքել, միթէ որբերի, անապաստանների օգտին չէ լինելու,—իւրան յատուկ քնքշութեամբ աղջկան պատասխանեց տիկին Հայկանուշը:

Բայց Մարգարիտը, մօր խօսքը դեռ չըվերջացած, սանդուխքներով իջնում էր:

Մի քանի րոպէ լուսթիւնից յետոյ տիկին Հայկանուշը սեղանի վրայից վերառաւ մատիտի երկարութեամբ և երկու մատի էլ լայնութեամբ պսպղուն մի թուղթ, երկարութեան վրայ ծալեց (նկար 2) և մկրատով աջ ու ձախ

կարատեց, եզերքից կէս մաս թողնելով և երբ բացաւ այդ թուղթը, ստացւեց շղթայ (նկար 1):

— Շղթայ, շղթայ, ինչ սքանչելի շղթայ է:



Նկար 3.


Երեխաները միաբերան, ուրախութիւնից թռչկոտելով բացականչեցին: Իսկ փոքրիկ Վարդուհին ձեռքն արդէն պարզած դէպի տիկինն Հայկանուշը՝ կամենում էր ստանալ առաջին երեխայրիքը:

Տիկինն Հայկանուշին կարծէք մի տեսակ թախիժ, մտահոգութիւն պատեց և շղթան հետը վերցնելով՝ քայլերն ուղղեց դէպի բարեգործական ընկերութեան գրասենեակը, ասելով՝

— Ձէ, Վարդիկս, շղթան քեզ չեմ տայ. գնամ օրիորդ Գայիանէին ուղարկեմ, նա ձեզ ցոյց կըտայ քսակներ, զամբիւղներ, ջահեր և բուրգեր պատրաստելը: Ես գնում եմ ժողովի:

* * *


Երբ օրիորդ Գայիանէն մտաւ որբանոց, Սաթենիկն արդէն տասը շղթայ պատրաստել և դարսել էր սեղանի




Նկար 4.

վրայ: Այդ շղթաներից մէկը նոյնիսկ փոքրիկ Վարդուհին էր շինել:

Օրիորդ Գայիանէն վարժուհու նման ժպտողէմ, բայց խստապահանջ մի դաստիարակչուհի էր, որ տիկինն Հայկանուշի հաշուով բարձրագոյն ուսումնս ստացել էր Գերմանիայում և հիանալի թէ նկարում էր, թէ նրա գում և թէ երեխաների հետ պարապում:



Նկար 5.



Նկար 6.

Օրիորդը բարեկրով երեխաներին, միաժամանակ վերցրեց պսպղուն, գունաւոր թղթերից մի քառակուսի կտոր, մկրատով կտրեց (նկար 4), թղթի ծայրերը՝ խաչածն նշանները մէկի վրայ միւսը վրայ բերելով, ծալեց և ստացաւ նկար 5: Յետոյ այս թղթի վրայ նշանակած a ծայրը դնելով b-ի վրայ, ծալեց մի կողմից և ծալեց հակառակ կողմից ու ստացաւ նկար 6: Ապա նկար 6-ի վրայ երկու սև կէտերը միմեանց վրայ դնելով՝ ստացաւ նկար 7, որի ծայրերը, ինչպէս ցոյց է տւած նկար 8, կտրուեց դէն գցեց և աջ ու ձախ էլ մկրատով կտրտելուց յետոյ երբ բացաւ, տեսան մի փառահեղ 8 անկիւնանոց մեծ աստղ: Մէջը գցեց մի ընկոյզ և վերելից բոլոր անկիւններով անցկացրեց մի ժապաւէն ու կապեց հանգոյցանման, որ և ստացւեց նկար 3 քսակը:



Նկար 7.



Նկար 8.

Տասը ըզլից յետոյ ամենքն էլ մի-մի մկրատ ձեռներին՝ պատրաստել էին նոյն նկար 3-ից տասը քսակ: Իսկ այդ ժամանակամիջոցում օրիորդ Գայիանէն մետաքսից էր պատրաստել երեք անգամ աւելի մեծութեամբ նոյն նկար 3 քսակից և ընկոյզի փոխարէն



Նկար 9.


մէջը գցել էր մի դեղին մեծ նա-
րինջ ոսկեգօծ թղթի մէջ փաթա-
թած:

Փոքրիկ Վարդուհին հրճուում
էր, ծափ տալիս, թռչկոտում, իր
պատրաստած քսակն էլ ձեռքից
բաց չըթողնելով, բայց միննոյն
ժամանակ նա կամենում էր, որ
ինքը միայն շղթաներ պատրաստէ:

— Ի՞նչ է, Վարդիկ, մեր հայ-
րենիքի շղթաները քիչ են, — խօսեց
օրիորդ Գայիանէն, — էլի ես կամե-
նում շղթաներ: Կուզե՞ս ելակ, գառ-
նիկ, կրենդէլ պատրաստենք:

— Չէ, չէ, օրիորդ, շղթայ եմ
ուզում:

Օրիորդ Գայիանէն այլևս չընդ-
դիմախօսեց Վարդուհուն, այլ վերց-
րեց երկու զանազան գոյնի գառ-
վարաղ թուղթ, կտրեց մատի լայ-
նութիւնով, մէկի ծայրը դրեց միւսի վրայ
(Նկար 11), կազմեց ուղիղ անկիւն, յետոյ մէկը միւսի վրայ




Նկար 11.

ծալելով (Նկար 12) ստացաւ Նկար 10 շղթան:


— Ահա, այս շղթան
քեզ, Վարդիկ, իսկ ես
հիմա ձեզ ցոյց տամ
մի ուրիշ շղթայ, —
սակաւախօս օրիորդ
Գայիանէն այս ասելով՝

շղթան տւաւ փոքրիկին:

Այժմս ամենքէ էլ կտրատեցէք
կէս մատ լայնութիւնով և մի մատ եր-
կարութիւնով թղթեր: Զարմայր, դու դեղին թղթերը կըս-
րիր, Սաթօ, դու էլ արծաթի, իսկ Անուշաւանը կապոյա:



Նկար 10.



Նկար 12.

Ինքն էլ կանաչ թուղթը մի ակըն-
թարթում կտրատեց և մէկի ծայ-
րերը սոսիւ ձի մէջ թաթախած վրձի-
նը քսելուց յետոյ միացրեց ու
ստացաւ մի օղակ: Այս օղակի
մէջն անցկացրաւ մի ուրիշ նման
թուղթ և ծայրերը միացնելով՝ ըս-
տացաւ օղակի մէջ մի ուրիշ օ-
ղակ և այսպէս շարունակելով՝ նը-
կար 9 շղթան պատրաստեց:


Երեխաները վայրկենապէս սո-
վորեցին և մի քանի բոպէից յե-
տոյ տասնեակ շղթաներ ոսկուց,
արծաթից, այսինքն ոսկի գառ-
թղթից, արծաթի գառ թղթերից
դարսւել էին մեծ սեղանի վրայ:

— Այժմս էլ զարդարենք եղևնա-
խնձորը (Նկար 13):



Նկար 13.


Վերցնենք կապոյտ թուղթ ծա-
լենք չորս անգամ, անհարթ մասը
կտրենք և երբ բանանք՝ կըստացւի
Նկար 14:



Նկար 14.


Ապա վերցնենք սպիտակ թուղթ,
նոյնպէս ծալենք չորս անգամ, ան-
հարթ մասերը կտրատենք և երբ
բաց անենք՝ կըստանանք Նկար 15:

Այժմս այդ թղթերը նորից ծա-
լեցէք մինչև ստանաք տասնևմեց
ծալածք (Նկար 16 և Նկար 17),
կտրատեցէք սև նկարածի նման
աջ ու ձախ, ի հարկէ մինչև թըղ-
թի վերջը չըկտրելով, որպէսզի
թղթի պատառը չըկտրւի և վայր
ընկնի:




Նկար 15.

Յետոյ վերցրէք մի ձաղ, ցցեցէք եղևնախնձորի մէջ և այդ գոյնգոյն թղթերը, որ անպատճառ մէկը միւսից մեծ պէտք է լինեն, հազցրէք խնձորի վրայ, դէպի ցածը կուացրած և մէկն էլ դէպի վերև: Ճաղն էլ կուացրէք, մարուկ շինեցէք, որպէսզի կարելի լինի տօնածառի ճղներից կախել:



Նկար 16.




Նկար 17.

Օրիորդ Գայիանէն միաժամանակ թէ պատմում էր և թէ զարդարում այս սիրուն եղևնախնձորը (նկար 13):

—Օրիորդ ջան, գառնիկ ու ելակ էլ սովորեցրու, մէջ մտաւ դարձեալ չարածճի Վարդուհին:

Օրիորդ Գայիանէն Վարդիկին մի պինդ համբուրելով, սեղմեց կրծքին և այդպէս բանտարկած՝ մի սպիտակ կարտօնի վրայ նկարեց գառն, խնձոր, կրենդէլ: Յետոյ մկրատով կրտօնեց, ներկեց զանազան գոյներով, իսկ խնձորի վրայ էլ գոյնգոյն գառվաբաղ թղթեր կպցնելով, նեղ, պսպրղուն երիզներով միմեանց հետ միացրեց և առաւ նկար 18-ը Վարդուհուն, որ աչքերը չուած թէ դիտում էր և թէ մտորում՝ եարսը մի օր ինքն էլ կարողանալու է օրիորդ Գայիանէի նման նկարել և վարժուհի լինել իր երկինք զնացած մայրիկի ծննդավայր Մուշում:




Նկար 18.

—Այժմսէլ ջան պատրաստենք, —ասելով, օրիորդ Գայիանէն վերցրաւ մի կարտօն, տրամագիծը չափեց 6 սանտիմետր, մատիտով նախ բաժանեց կարտօնը 6 հաւասար մասի, մկրատով կտրատեց (նկար 20), անկիւնները վեր

բարձրացրեց, բաց տեղերը պսպրղուն թղթով միացրեց: Ապա վեր առաւ երկու մատիտի երկարութեամբ վեց հատ գառներից կտրատեց և իւրաքանչիւրի տակը մի-մի խոշոր յուլունք գցեց:

Այդ էլ անելուց յետոյ, նեղ թղթերից ժապաւէններ կարատեց՝ (նկար 21): Սրանցից կազմեց օղակ և թէ կարտօնի շուրջը ներքևից զարդարեց և թէ վերևի մասը (նկար 22) և այդ բոլորը միացնելով ստացաւ նկար 19 ջան, որի մէջ դրաւ գունաւոր նախշած թուղթ և կախեց պատուհանի անկիւնի մեխից:

Մինչդեռ երեխաները սկսել էին այդ ջահից ընդօրինակել, կայտառ Վարդուհին մի կարտօնի կտոր ձեռին՝ թախանձում էր օրիորդ Գայիանէին, որ իր համար մի գամբիւղ շինէ և Մարգօի աւած խնձորը գցէ մէջը:




Նկար 19.

—Ինչո՞ւ չես ուտում, Վարդիկ, խնձորդ: Չէ՞ որ օրիորդ Մարգարիտը առաւ քեզ, որ ուտես և ոչ թէ պահես:




Նկար 21.

—Օրիորդ ջան, մի լաւ, շատ լաւ գամբիւղ շինի, որպէսզի խնձորն էլ ոսկեգօծենք և այնպէս ուղարկենք:



Նկար 20.

—Աղջիկ, ո՞ւմ ես ուզում ոսկեգօծ խնձորն ուղարկել, — օր. Գայիանէն հետաքրքրութեամբ հարցրեց Վարդուհուն:



Նկար 22.

—Միածին Յիսուս-Քրիստոսին,—ըջօրէն պատասխանեց չարածճի մանուկը:


—Զաւակս, Յիսուս-Քրիստոսը խնձոր չի ուտում:

—Այդքան էլ չըզիտե՛ս, Վարդի,—դարձեալ կտարած. գգալի նման մէջ մտաւ Զարմայրը,— որ նորածին Յիսուս-Քրիստոսը ատամներ դեռ չունի...

—Գիտեմ, գիտեմ,—ամեն ինչ իմացող, Զարմայրի խօսքը վշտացած ընդհատեց Վարդունին:—Միթէ այդքանն էլ չըզիտեմ, որ նոր ծնւած մանուկը խնձոր չի ուտի:

—Իէ որ զիտես, էլ ի՛նչ ես ասում:


Վարդունին այլևս Զարմայրին չընդդիմախօսեց: Նա ոսկեգօծ խնձորը կամենում էր ընծայել նոր տարի օրը ցնցոտիների մէջ այն գողգողիւն ձեռներով պառաւին, որ Մողնու եկեղեցու գաւթում միշտ կանգնած էր լինում,



Նկար 24.

նրան, որին շատ անգամ իր բաժին ընկած մրգեղէնից, կանֆետներից մաս էր հանում: Այս պառաւի միակ աղջիկը նոյնպէս սպանւել էր Մուշում և որդեկորոյս Մարօն հարիւր սար ու քար անցնելով հազիւ հազ թիֆլիս էր ընկել, աչքի մէկը կուրացած:


Մինչդեռ Վարդունին մտքով տարւել էր դէպի իր հայրենակից թշւառ Մարօն, օրիորդ Գայիանէն արդէն պատրաստել էր նրա համար նկար 23 շքեղ զամբիւղը:



Նկար 23.

Վեր էր առել գունաւոր մի թուղթ, երեք անգամ ծալել և ստացել նկար 24, որի աջ և ձախ կողմից մկրատով


կտրատել էր (ի հարկէ մինչև վերջը չըկտրելով, որ թուղթը չըպոկւի և պատառ-պատառ լինի) ու երբ բացելէր ու Վարդունու խնձորն էլ գցել մէջը, ըստացւել էր զամբիւղի ներքևի մասը:




Նկար 25.

Յետոյ վեր էր առել մի կարտոն, կլորացրել, եզրները մկրատով կտրտել գցել նկար 25-ի մէջը, երկու կողմից երիզներով միացրել, վերևն էլ հանգոյցածև գեղեցիկ կապել: Չըմոռանամ ասելու, որ զամբիւղը վերևի կարտոնին ամրացրել էր ստինձով:

—Կուզե՛ս, Վարդիկս, մի ուրիշ զամբիւղ էլ շինենք,—ասելով օրիորդ Գայիանէն վեր առաւ մի ոսկեգոյն հաստ թուղթ, կըտրեց 11 սանտիմետր երկարութիւնով և 4 սանտիմետր էլ լայնութիւնով, երկարութեան վըրայ ծալեց նկար 28 և սկսեց մկրատով կտրտել, ապա վեր առաւ մի կարտոն լայնութիւնը 2 սանտիմետր և երկարութիւնն էլ 10 սանտիմետր, ծայրերը ստինձով ամուր միացրեց, ստացաւ մի գլան, սրա վրայ կպցրեց նկար 28 թուղթը ուղիղ մէջ տեղից: Ապա մի մատի լայնութիւնով և մի մատիտի երկարութիւնով երկու կարտոն կտրեց, գեղեցիկ հաշիա նկարեց վրան և թղթի ներքևն ու վերևն ամրացրեց այդ հաշիաների մէջ, մի ուրիշ կարտոն էլ կտրեց, գցեց զամբիւղի մէջը, որից գոյացաւ ամուր յատակ և մի մատիտի երկարութիւնով էլ կարտոնի վրայ զառթուղթ կպցրաւ ու կարտոնի




Նկար 27.



Նկար 26.

մէջ, մի ուրիշ կարտոն էլ կտրեց, գցեց զամբիւղի մէջը, որից գոյացաւ ամուր յատակ և մի մատիտի երկարութիւնով էլ կարտոնի վրայ զառթուղթ կպցրաւ ու կարտոնի



նկար 28.

երկու ծայրերը ամ-
րացրաւ զամբիւղի
վերևի կարտոնում:
—Օրիորդ,— դար-
ձաւ ծանրաբարոյ
Սաթենիկը դաստի-
արակչուհուն,— ան-

շուշտ դուք յոգնեցիք: Այժմս դուք նայեցէք և մենք կը-
պատրաստենք այդ երկու ձև զամբիւղներին:

— Լաւ,— պատասխանեց օրիորդ Գայիանէն:— Միայն թէ
իւրաքանչիւրդ մի-մի գոյն շինեցէք և անուաներդ էլ վրան
նշանակեցէք:

— Օհօ,— յանկարծ մանկանոցում լոյս աստղի նման
փայլեց Մարգօն:— Այս սրբան շղթաներ, զամբիւղներ, շա-
հեր: Եւ բոլորն էլ դատարկ: Ո՞վ է փիւստա կա-
մենում, թող ձախ ձեռքը բարձրացնի, ով նուշ
ու չամիշ, նա էլ աջ ձեռքը, իսկ ով կանֆէտ,
թող նա էլ կուկրուկու կանչէ:


Երեխաները բոլորն էլ մի ակնթարթում
մկրատները, կարտոնները, սոսինձի վրձինները
մի կողմ թողեցին և թէ աջ ու ձախ ձեռքներն
մէկը միւսից աւելի բարձրացրած ու կուկրու-
կուի հետ ծուղրուղու էլ կանչելով՝ Մարգարի-
տին շրջապատել էին:

Իսկ Մարգարիտն էլ չոր մրգեղէնով, կան-
ֆէտով լի քսակները դատարկում էր զամբիւղ-
ների մէջ: նկար 29.

— Մարգօ, զգոյշ, դեռ թաց են, սպասիր, մի ածիր,—
բղաւում էր օրիորդ Գայիանէն:

Իսկ Մարգարիտն էլ աւելորդ մնացած մրգեղէնը սե-
զանի վրայ շող տալուց յետոյ, գրկեց օրիորդ Գայիանէին
և սկսեց բերանով նւագել ու վայլս պարել:

Վարդիկն ու Անուշաւանը Հա նազանի, նազանին էին
սկսել երգել, Սաթօն ու Զարմայրը եայլի էին պատրաստ-



նկար 29.

ւում պարել, որ յանկարծ նկատեցին դռան շէմքում տի-
կին Հայկանուշին:

Ձեռքով նշան արաւ տիկին Հայկանուշը Վարդուհուն,
որը մի ակնթարթում փաթաթեց տիկնոջ:

— Որ իմանաք, տիկին Հայկանուշ, թէ քանի հարիւր,
հազար շղթաներ ենք շինել:

— Զաւակս, ինչ ես այդքան հմայւել այդ շղթանե-
րով,— պատասխանեց տիկին Հայկանուշը և սկսեց տնդղել
երեխաների ստեղծագործութիւնները: Ապա դառնալով օ-
րիորդ Գայիանէին նկատեց, որ պակասում
են նիզակաձև բուրգեր նկար 30 և վերցնե-
լով երեք գոյն կարտոն ու մէկը միւսի վրայ
գնելով, կտրտեց նկար 31 ու ստացաւ նկար
32 և երբ այդ նկարները միմեանց հետ կըպ-
ցրեց, գոյացաւ նկար 30 նիզականման բուր-
գը, որն ըստ երևոյթին այնքան բարդ կազմը-
ւածք ունի, բայց իսկապէս ամենահեշտ և
հասարակ կերպով կառուցւեց:


Այժմս էլ ամենքիդ համար մի-մի աստղ
շինեմ և գնացէք թէյ խմեցէք:

«Աստղ մի պայծառ երևեցաւ, աւետիս»,
սկսեց երգել աշխոյժ Մարգարիտը և Վար-
դիկի հետ պարել:


Բոլոր երեխաներն էլ նոյնպէս ձայնակ-
ցեցին Մարգօին և այնքան ներդաշնակ էին
երգում, որ ինքը օրիորդ Գայիանէն էլ
սկսեց մինչև անգամ երգել:

Իսկ տիկին Հայկանուշը, որ արդէն մի նկար 30.
թուղթ ծալել կիսաշրջան էր արել (նկար 33), մտքում յը-
ղանում էր ծննդեան օրը այս բոլոր երեխաներին, իր
Մարգարիտին և օրիորդ Գայիանէին վերցնել հետը և մի
քանի տեղ աւետիս ման գալ:

— Թողէք, ես պատրաստեմ,— օրիորդ Գայիանէն ընդ-
հատելով տաղը, կամենում էր տիկին Հայկանուշի ձեռքից
առնել մկրատը:




նկար 30.



Նկար 32.

—Ո՛չ, խնդրում եմ դուք մի քանի անգամ կրկնել տւէք երեխաներին «Այսօր տօն է», լաւ են երգում, իսկ աստղերը ես կը պատրաստեմ:



Նկար 31.


Եւ տիկին Հայկանուշը նկար 33-ը կրկին ծալեց, ստացաւ նկար 34, այս էլ ծալեց, ստացաւ նկար 35, սա էլ ծալեց, ստացաւ նկար 36 ու յետոյ աջ ու ձախ կտրտելով, ինչպէս նկար 37, երբ բացաւ, ստացւեց մի պըսպըղուն խոշոր և պայծառ աստղ, որի քառորդ մասն է նկար 38:

Երեխաներն այնպէս էին տարւել «Այսօր տօն է» տաղով, որ չընկատեցին էլ թէ ինչպէս տիկին Հայկանուշը գնաց: Սակայն երբ տաղը վերջացրել էին, տեսան եօթ գոյնզգոյն աստղեր սեղանի վրայ:

Օրիորդ Գայիանէն աստղերը բաժանեց երեխաներին և յետոյ ամենքն ուրախ անցան սեղանատուն թէյ խմելու: Մարգարիտն էլ նրանց ընկերացաւ, թէյ խմեց որբանոցում և օրիորդ Գայիանէն նրան ճանապարհեց տուն:

Որբանոցի դռան կախած արկղիկի մէջ Մարգարիտը մի սպիտակ դրամ գցելով, գլարթ և ինքնագոհ եկաւ տուն և իսկոյն դաշնամուրի տակ նստեց ու սկսեց նւագել ծընընդեան տաղը:


Օրիորդ Գայիանէն էլ ըսկըսեց երգել «Այսօր տօն է» Տիկին Հայկանուշը և պարոն Ռոստոմը միւս սենեակից դուրս եկան դանդիւմ:



Նկար 33.

—Ի՞նչու այդքան ուշացաք, — հարցրեց տիկին Հայկանուշը և առանց սպասելու պատասխանի՝ դիմեց ամուսնուն, — լաւ չէ, Ռոստոմ:

— Հիանալի է երգում օրիորդ Գայիանէն: Այ թող մեր եկեղեցիներում այսպէս երգեն, տեսնեմ աղօթողներով միշտ լիքը չի լինիլ:



Նկար 34.

— Իէ որ գոհ ես, նախ քեզանից սկսեմ:

— Ղամբարափայլ սրբոյ տօնիս...

— Ա. կնիկ, դու էլ միշտ հէնց ինձ

ես տեսնում, — ասելով, պարոն Ռոստոմը երկու ոսկի դրամ հանեց զրպանից և տւաւ տիկին Հայկանուշին:



— Ահա մէկը օրիորդին, միւսն էլ Մարգօրին:

— Չէ, Ռոստոմ, ծննդեան աւետիս ենք ման

գալու, մեր որբանոցի օգտին կը պահեմ:

Պարոն Ռոստոմը, որ ամուսնանալով Հայ- նկար 36.




Նկար 35.

կանուշի հետ՝ մի քանի տարով տեղափոխւել էր կնոջ հետ Անգլիա և թէ ինքն էր իւրացրել անգլիական տղամարդու խստապահանջ, տոկուն, շիտակ աշխատասիրութիւնը և թէ ամուսնուն հնարաւորութիւն տրւել կը թւերու անգլուհու նման պարկեշտ, ինքնաճանաչ, գորովագութ, միևնոյն ժամանակ անգլիացու նման, գործից ազատ ժամանակ ընտանիքում և բարեկամների շրջանում յայտնի էր իր վարձախօսութիւններով, — դարձաւ ամուսնուն.




—Ա. կնիկ, դու էլ փաղւայ գիւղացի
տէրաէրի նման Քրիստոս դեռ չը
խաչւած՝ շէն-բաշէն Քրիստոս յար-
եաւ ես ասում: Մի սպասի, մի թող
լոյս աշխարհ գայ, յետոյ է...

նկար 37. — Գնանք, գնանք թէյ խմենք, — ա-
սելով, տիկին Հայկանուշը ընդհատեց
ամուսնուն և մտաւ սեղանատուն, ետեիցն էլ պարոն
Ռոսատովը գնաց և ապա օրիորդ Գայիանէն ու Յիսուսին
հիւր գնալ փափագող Մարգարիտը:



նկար 38.



Որք ու անապատան մանուկներից
ՄԱՐԳԱՐԻՏԻՆ
մարգարիտներ և սուրբ ԵՆԵԱՆՆԻՆ

1910 թ. բաժանորդագրութիւնը

XXVIII
- Տարի -

ԱՂԲԻԻՐ ԵՒ ՏԱՐԱԶ

XXI
Տարի

ՊԵՏԱԿԵՐԱԶԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Որովհետև **ԱՂԲԻԻՐ-ՏԱՐԱԶ** պատկերազարդ հանդէսների տարածման համար խմբագրութիւնը ոչ մի ջանք **չէ** գործադրում, պրօպագանդ չէ անում, ոչ թերը բացառապէս նւիրած լինելով թերթերի բազմաբովանդակ, ճոխ և իմաստալից հրատարակելուն, ուստի այսու հրաւիրում է հայութեան բոլոր խաւերում գործողներին սթափւել իրանց սֆինքսային սառնասրտութիւնից և տարածել ազդի մէջ ճշմարիտ դաստիարակութեան, գիտութեան ու արեւստին նւիրած **ԱՂԲԻԻՐ** մանկավարժական պատկերազարդ ամսագիրը մանուկների եւ պատանիների համար, որ թեւակոխում է իր **28 ՏԱՐԻՆ և ՏԱՐԱԶ** գեղագիտական, գրական, հատարակական, քննադատական, քաղաքագիտական պատկերազարդ հանդէսը, որի **20** տարին լրացնելուն և **21-րդ** տարեշրջանը մտնելու առիթով, առաջիկայ **1910** թւականին դպրոցական աշակերտ ունեցող ընտանիքների համար **ԱՂԲԻԻՐ-ՏԱՐԱԶ**ի տարեկան բաժանորդագինը **10** բուբուլց իջեցնում ենք **5** ռ. (հինգ ռ.)

ՊՐԷՄԻԱՆԵՐԸ ԵՆ

1) ՎԵՆՓԸՈՒ ՄԵՏԹԷՈՍ Բ. Կաթողեկոսի բազմագոյն, 2) Կ. Սահակի, 3) Կ. Մեսրոպի, 4) Միքայէլ Նարանդեանի մեծագիր պատկերները, որ բաժանորդն ստանում է նոր տարւայ **ՏԱՐԱԶ**ի №-ի հետ:

1. **ԱՂԲԻԻՐ** դպրոցական աշակերտուհիների և աշակերտների համար տարեկան **ՄԷԿ ԲՈՒԲԼԻ** (1 ռ.):

2. **ԱՂԲԻԻՐ** և **ԱՂԲԻԻՐԻ ԱԿՈՒՆՔ** և **ՄԵՍՐՈՊԻ** և **ՄԻՔԱՅԷԼ ՆԱՐԱՆԴԵԱՆԻ** մեծագիր **3** պատկերներով տարեկան **ԵՐԿՈՒ ԲՈՒԲԼԻ** (2 ռ.):

3. **ԱՂԲԻԻՐ** դպրոցների, գրադարանների, հաստատութիւնների և հասակաւոր բաժանորդների համար **3** ռ. (Արտասահման **5** ռ.)

4. **ԱՂԲԻԻՐ** և **ՏԱՐԱԶ**, Աղբիւրի Ակունք դպրոցական աշակերտի հասցէով, ընտանիքների համար բոլոր պրէմիաներով տարեկան **10** բուբուլ փոխարէն **5** ռ.

5. **ԱՂԲԻԻՐ-ՏԱՐԱԶ**, Աղբիւրի Ակունք, Յանդիւսներ եւ պրէմիաներ դպրոցների, հաստատութիւնների, գրադարանների և հասակաւոր բաժանորդների համար տարեկան **10** ռ. Արտասահման **15** ռ.

Հասցէն՝ **Тифлис, Редакция „АГБУР-ТАРАЗ“.**
TIFLIS. (Caucasus) Redaction „AGBUR-TARAZ“.
 ՄԱՅՅԱՆԻԿԱՆԻ ԱՂԲԻԻՐ

«Ազգային գրադարան»

 NL0144123

16201